Եւ արդ՝ եթէ մեկնիչն ի նմանէ այնքան արտմութիւն էր անշնչոց և շնչաւորաց՝ թագաւորաց և զաւրավարաց՝ որչափ էս առաւել ուրախութիւն գիւտ նորա, որպէս մեռելոց ի կենդանիս։ Սակս որո զբաւարձացեալ հաւատացեալսն ի յայտնութիւն նորա, և փութանակի ազգ առնէ արքային զերեւումն և զիսորհուրդ սրբոյն։ Զոր լուեալ և լցեալ խընտութեամբ՝ առաքէ յԱսորիս՝ կոչել զայն որ ուխտեալ էր նմա։ Որոյ անյապաղ առեալ ընդ իւր զիմաստունն Դանիէլ՝ և ժամանէ առ կոչողն իւր՝ թարգմանելով զվաղուց արարեալ նշանսն զկրկին տասն և զերկու տասն,[1] որք ոչ բաւական[ան]այն բայից մերոց, որ ընդ խնդութիւնդ՝ ժամանէր և արտմութիւն։

Եւ ապա հրամանաւ հայրապետին առնոյր երանելին Մեսրոբ զնշանագիրսն և իջանէր Ցամիթ, և տայր ի թարգմանողսն զի յարմարեսցեն ըստ վանկին. զորս առեալ և ոչ կարացեալ յաւդաւորել, ամաւթալից մնային։ Իսկ նորա ընկալեալ՝ իջանէր յԵդեսեայ առ

---

1. Վարդ. Պատմ. «Մեսրոպ յորինեաց դպրութիւն հայերեն f u u l ե ւ k r կ ո ւ գիր առ Դանիէլի Ասորւոյ գտեալ ի հին ժամանակաց»։

Նոր. Գր. Գ. գլ. ԾԲ. Դանիէլեան գրերի մասին այս k ասում. «կարգեալ ըստ ձեւոյ օրինակի յունականին զվաղնչուց գտեալ նշանագիր տառից»։